ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱԽՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

www.src.am

ԻՆՉ Է ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱԽՍԸ

Հայտարարագիր ներկայացնող ֆիզիկական անձն ինչպես իր, այնպես էլ ընտանիքի անդամների համար ունի եկամտային հարկի գումարից սոցիալական ծախսի փոխհատուցման իրավունք: Ընտանիքի անդամներն են՝ ֆիզիկական անձի ամուսինը, ծնողները և զավակները (որդեգրողները և որդեգրվածները):

ՈՐՆ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱԽՍ

1. Հայաստանում գործող ապահովագրական ընկերություններից առողջության ապահովագրական փաթեթի ձեռքբերումը,

2. Հայաստանում իրականացվող կրթական հաստատություններին կատարված ուսման վճարները:

ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԻՑ

Փոխհատուցումից օգտվելու համար անհրաժեշտ է սոցիալական ծախս կատարելիս՝ ծառայություն մատուցողից պարտադիր պահանջել հաշվարկային փաստաթուղթ (invoice)՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ և ՀԾՀ: Իսկ ընտանիքի անդամի դեպքում՝ նաև նրա անձը հաստատող փաստաթուղթը և ՀԾՀ-ն:

ՈՐՔԱՆ Է ԿԱՁՄՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱԽՍԸ

Առողջապահության գծով սոցիալական ծախսի առավելագույն չափը տարեկան 50.000 դրամն է, կրթության գծով՝ 100.000 դրամը: Բոլոր ուղղություններով սոցիալական ծախսերի առավելագույն չափը՝ տարեկան 100.000 դրամ է: